# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ՝ press@moj.am*

N 01/6859-12
05.11.2012թ

**Երևանի քաղաքապետ**
**պարոն Տ.Մարգարյանին**

**Ի պատասխան Ձեր 2012 թ. հոկտեմբերի 26-ի**
**01/7-10174 թվակիր նամակի**

**Հարգելի պարոն Մարգարյան**

Կից ներկայացնում ենք «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Փաստաթղթով
СЕКРЕТАРИАТ

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

523209

№ 12/52887 05.11.12

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Գ. Թադևոսյան հեռ. 380-227**

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՍՐՅԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

1. Օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Օրենքում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1) Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված լրացումներն անհրաժեշտ է միավորել մեկ հոդվածում, քանի որ հիշյալ հոդվածներով նախատեսված լրացումները վերաբերում են «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի միևնույն՝ 13-րդ հոդվածին:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 7-րդ կետին:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՍՐՅԱՆ**